

12 մայիսի, 2021 թ.

Հայաստանում մեկնարկում է HSBC-ի և Ashoka-ի «Կանաչ հմտություններ և նորարարություն» մրցույթը

HSBC-ն սոցիալական ձեռներեցությունը խթանող Ashoka միջազգային կազմակերպության հետ համատեղ մեկնարկել է իր տեսակի մեջ առաջին «Կանաչ հմտություններ և նորարարություն» մրցույթը (չելենջը): Նորարարության զարգացմանն ուղղված միջազգային այս մրցույթին կարող են մասնակցել սոցիալական ձեռներեցներ 51 երկրներից՝ այդ թվում Հայաստանից: Մրցույթի արդյունքում հաղթող կնանաչվեն 15 սոցիալական ձեռներեցներ՝ արժանանալով մինչև 20 000 ԱՄՆ դոլարի դրամական պարգևի: Հաղթողները հնարավորություն կունենան նաև օգտվելու HSBC-ի և Ashoka-ի փորձառու մասնագետների խորհրդատվությունից իրենց նորարարական լուծումները զարգացնելու համար:

Մրցույթի մասին. HSBC-ն և Ashoka-ն փնտրում են սոցիալական ձեռներեցների, ովքեր օգնում են տնտեսական հնարավորություններ չունեցող անձանց ձեռք բերել կանաչ տնտեսություն վարելու հմտություններ և զարգանալ՝ միաժամանակ ապահովելով, որ անցումը դեպի կանաչ տնտեսություն օգտակար լինի բոլորի համար: Մրցույթին կարող են մասնակցել նորարարական առաջարկներ ունեցող բոլոր անձինք՝ այդ թվում և դիմորդներ երիտասարդական նախաձեռնություններից:

HSBC-ն և Ashoka-ն փնտրում են այն սոցիալական ձեռներեցներին, ովքեր

- օգնում են նախկինում տնտեսական հնարավորություններ չունեցող անձանց ձեռք բերել անհրաժեշտ հմտություններ կանաչ տնտեսության զարգացող ոլորտներում աշխատանք գտնելու համար,
- օգնում են էկոլոգիապես վնասակար աշխատանքներում ներգրավված համայնքներին անցնել աշխատանքի կանաչ տնտեսության ոլորտներում,
- գտնում են նորարարական մոտեցումներ, որոնք օգնում են երիտասարդներին կայանալ և ի վերջո դառնալ առաջնորդներ կանաչ տնտեսության ոլորտներում:

Հաղթող կնանաչվեն 15 սոցիալական ձեռներեցներ: Մրցանակներից առնվազն 3-ը կտրամադրվեն երիտասարդական կազմակերպությունների:

Մրցանակներ և առավելություններ. Նախաձեռնությունն իրականացնող թիմը կորոշի յուրաքանչյուր հաղթողին տրամադրվելիք մրցանակի չափը: Ընդհանուր առմամբ, մրցանակները կշնորհվեն հետևյալ երկու դասակարգերով՝ «Ամենանորարարական լուծումներ» և «Լավագույն լուծումներ սկզբնական փուլի համար»: Առաջին դասակարգի մրցանակների կարժանանան այն լուծումները, որոնք հստակ մոդելներ են առաջարկում դրանց ազդեցությունը բարելավելու համար: Հաղթողները կարժանանան մինչև 20 000 ԱՄՆ դոլարի դրամական մրցանակի, ինչպես նաև կստանան HSBC-ի և Ashoka-ի մասնագետների խորհրդատվությունից օգտվելու հնարավորություն՝ առաջարկվող լուծումները զարգացնելու համար: Երկրորդ դասակարգի մրցանակների կարժանանան առանձնահատուկ նորարարական գաղափարներով լուծումները, որոնք դեռ զարգացման վաղ փուլում են: Հաղթողները կարժանանան մինչև 15 000 ԱՄՆ դոլարի դրամական մրցանակի, ինչպես նաև կստանան աջակցություն և խորհրդատվության հնարավորություն իրենց նորարարական լուծումները զարգացնելու համար:

Մրցույթին կարող են մասնակցել մինչև ս.թ. հունիսի 5-ը՝ Հայաստանի Հանրապետության ժամանակով ժամը 03:00-ն:

Լրացուցիչ տեղեկատվության և մրցույթին մասնակցելու համար այցելել <https://challenges.changemakers.com/challenge/greenskills>: Լրացուցիչ հարցեր ունենալու դեպքում դիմել «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ին՝ 060 655000:

HSBC Խումբ

HSBC Holdings plc-ը՝ HSBC Խմբի ընկերության գլխամասը, գտնվում է Լոնդոնում: Խումբը ծառայություններ է տրամադրում 64 երկրներում և տարածաշրջաններում՝ Եվրոպայում, Ասիայում, Հյուսիսային և Լատինական Ամերիկայում, ինչպես նաև Մերձավոր Արևելքում և Հյուսիսային Աֆրիկայում: HSBC-ն հանդիսանում է աշխարհի ամենախոշոր և հզոր ֆինանսական կառույցներից մեկը, որի ակտիվները 2021թ.-ի մարտի 31-ի դրությամբ կազմել են \$2,959 միլիարդ ԱՄՆ դոլար:

HSBC Հայաստան

«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ը հիմնադրվել է 1996թ.-ին: Բանկը համատեղ ձեռնարկություն է, որի 70%-ը պատկանում է HSBC Խմբին, իսկ 30%-ը՝ արտերկրի հայ գործարարի: Էյչ-Էս-Բի-Սի Հայաստանը սպասարկում է շուրջ 30 000 հաճախորդի Երևան քաղաքում գտնվող իր 8 գրասենյակների և մոտ 350 աշխատակիցների միջոցով: 2021 թ.-ի մարտի 31-ի դրությամբ Բանկի ակտիվները կազմել են 306 միլիարդ ՀՀ դրամ՝ ներառյալ Էյչ-Էս-Բի-Սի Բանկ ՓԲ-Էլ-Սի Լոնդոնի կողմից Բանկի միջնորդությամբ տրամադրված վարկեր:

Բանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից: